ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
18 ապրիլի 2017 թվականի N 47-Ա

«ԵՐԱԶ ԻՄ ԵՐԿԻՐ» ՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ «ԿԱՊԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՍՈՒԲՍԻԴԻԱ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱԶՄԿՈՄԻՏԵԻ ԿԱԶՄԸ, ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ, ԾՐԱԳԻՐԸ, ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.12 կետի «բ» ենթակետի և 1.19 կետի «ա» ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N1 հավելվածի N1 աղյուսակի 08 բաժնի 02 խմբի 05 դասի 04 «Մշակութային միջոցառումների իրականացում» ծախսային ծրագրով Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի համար նախատեսված ծախսերի «Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական կազմակերպություններին» հոդվածը՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. «Երազ իմ երկիր» մարզամշակութային միջոցառում կազմակերպելու նպատակով 800.000 (ութ հարյուր հազար) դրամ տրամադրել Սյունիքի մարզային ենթակայության «Կապանի մշակույթի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը, նրա հետ կնքելով հանձնարարության պայմանագիր:
2. Հաստատել «Երազ իմ երկիր» մարզամշակութային միջոցառման կազմակերպման և անցկացման կազմկոմիտեի կազմը, կանոնադրությունը, ծրագիրը, ժամանակացույցը և ծախսերի նախահաշիվը՝ համաձայն N1 – N5 հավելվածների:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Վ. ՀԱԿՈԲՅԱՆ

2017թ. ապրիլի 18
ք. Կապան

Հավելված 1
ՀՀ Սյունիքի մարզպետի
2017թ ապրիլի 18 -ի
N 47-Ա որոշման

ԿԱԶՄԿՈՄԻՏԵ

<<Երազ իմ երկիր >> խորագրով մարզամշակույթային միջոցառման

1. Մ.Գասպարյան	ՀՀ Սյունիքի մարզպետի խորհրդական /նախագահ/
2. Ս.Դավթյան	ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության պետ
3. Հ. Ալեքսանյան	ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ
4. Ս. Դավթյան	ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության,մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի պետ
5. Հ.Հարությունյան	ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի պետ
6. Ա.Հայրապետյան	Կապան համայնքի ղեկավար /համաձայնությամբ/
7.Վ. Ադունց	Գորիս համայնքի ղեկավար /համաձայնությամբ/
8. Ա. Սարգսյան	Սիսիան համայնքի ղեկավար /համաձայնությամբ/
9. Մ.Զաքարյան	Մեղրի համայնքի ղեկավար /համաձայնությամբ/
10. Մ.Փարամազյան	Քաջարան համայնքի ղեկավար /համաձայնությամբ/
11. Վ. Արզումանյան	<<Կապանի մշակույթի կենտրոն>> ՊՈԱԿ-ի տնօրեն

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավար՝ Ռ.Սարգսյան

Հավելված 2
ՀՀ Սյունիքի մարզպետի
2017թ. ապրիլի 18-ի
N 47 -Ա որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

<<Երազ իմ երկիր >> խորագրով մարզամշակութային միջոցառման

Միջոցառման նպատակն է մարզի բնակչության շրջանում ներկայացնել մեր անկախ պետականության կայացած լինելը, ազգային արժեքների գնահատումը, հայրենասիրական գաղափարների տարածումը, երիտասարդության ու մատաղ սերնդի մեջ մշակութային արժեքների գնահատումը, միասնական հայրենիք կերտելու գաղափարների ամրապնդումը, գեղագիտական դաստիարակության խնդիրների իրականացումը, շնորհալի ու տաղանդավոր երեխաների ի հայտ բերումը, անհատի բազմակողմանի ու ներդաշնակ զարգացումը, առողջ սերունդ դաստիարակելու, նախադպրոցական և դպրոցահասակ երեխաների առողջության ամրապնդումը, նրանց ֆիզիկական որակների բարելավումը, հայրենիքի նկատմամբ հավատի դրսևորումը, մայրության ու գեղեցկության կերպարի նշանակության գերակայությունը, գարնան զարթոնքի հետ մշակութային կյանքի արժևորումը:

Միջոցառմանը մասնակցում են մարզի բոլոր քաղաքային համայնքներից ժամանած երաժշտական խմբեր, անհատ կատարողներ, նախադպրոցական ուսումնական հաստատությունների սաներ, հանրակրթական դպրոցների աշակերտներ: Միջոցառմանը իր ակտիվ մասնակցությունը կունենա Արցախի Հանրապետության Կովսական քաղաքի պատվիրակությունը: Միջոցառման ընթացքում հաղթող ճանաչված մասնակիցները կստանան մրցանակներ: Մարզի ուսումնական հաստատություններում կկազմակերպեն տարբեր բանավեճային հավաք-հանդիպումներ, բաց-դասեր, դասախոսություններ ու կլոր սեղաններ: ՀՀ Սյունիքի մարզպետի և համայնքի ղեկավարների հանդիպում՝ Հայկական բանակում ծառայող և Արցախյան ազատամարտի մասնակից կանանց հետ:

Մարզի տարածքում կազմակերպել <<Աշխարհն առանց պատերազմի>> խորագրով նկարչական աշխատանքների ցուցահանդես:

Տոնական համերգ Սյունիքի մարզում տեղակայված N զորամասերում:

Մայրության և գեղեցկության օրվան նվիրված ՀՀ Սյունիքի մարզպետի շնորհավորանքներ և պարգևատրում շնորհակալագրերով և հուշանվերներով մարզի բազմավաստակ կանանց, ինչպես նաև հայկական բանակում ծառայող կանանց, ՀՄՊ-վետերան կանանց:

Այցելություններ և շնորհավորանքներ Հայրենական Մեծ Պատերազմի մասնակից սյունեցի կանանց:

Պսակադրություն անկախության համար անհայտ կորածների հուշարձանին և զոհված ազատամարտիկների շիրիմներին:

Հանդիպում երկրապահ կամավորական միության անդամների և զոհված ազատամարտիկների ընտանիքների հետ:

Մարզի երաժշտական և արվեստի դպրոցների սաների մասնակցությամբ կազմակերպել և անցկացնել երգչախմբերի մրցույթ, անցկացնել երգչախմբերի մարզային փառատոն:

Երիտասարդության ուխտագնացություն մարզի պատմամշակութային հուշարձաններ, Վահանավանք և Հալիձոր, հարակից տարածքի մաքրում:

<<Մեկ օր տարեցների հետ>> խորագրով երիտասարդական ակցիայի կազմակերպում Կապանի <<Արծվաբույն>> տարեցների կենտրոն՝ կենտրոնի բնակիչների հետ համատեղ օրվա աշխատանքների կազմակերպում, ծառատունկ, տարածքի մաքրում և կանաչապատում, մտքերի փոխանակում, տարեցների հուշերի ունկնդրում, երգ ու պար, ասմունք:

<< Սյունիքի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավար՝ Ռ.Սարգսյան

Հավելված 3
ՀՀ Սյունիքի մարզպետի
2017թ. ապրիլի 18 -ի
N 47 - Ա որոշման

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

<<Երազ իմ երկիր >> խորագրով մարզամշակույթային միջոցառման

Միջոցառման նպատակը

Միջոցառման նպատակն է մարզի բնակչության շրջանում ներկայացնել մեր անկախ պետականության կայացած լինելը, ազգային արժեքների գնահատումը, հայրենասիրական գաղափարների տարածումը, երիտասարդության ու մատաղ սերնդի մեջ մշակութային արժեքների գնահատումը, միասնական հայրենիք կերտելու գաղափարների ամրապնդումը, գեղագիտական դաստիարակության խնդիրների իրականացումը, շնորհալի ու տաղանդավոր երեխաների ի հայտ բերումը, անհատի բազմակողմանի ու ներդաշնակ զարգացումը, առողջ սերունդ դաստիարակելու, նախադպրոցական և դպրոցահասակ երեխաների առողջության ամրապնդումը, նրանց ֆիզիկական որակների բարելավումը, հայրենիքի նկատմամբ հավատի դրսևորումը, մայրության ու գեղեցկության կերպարի նշանակության գերակայությունը, գարնան զարթոնքի հետ մշակութային կյանքի արժևորումը:

Միջոցառման պատվիրատուն և կատարողը

<<Երազ իմ երկիր>> խորագրով մարզամշակութային միջոցառման պատվիրատուն է՝ ՀՀ Սյունիքի մարզպետարանը, կատարողը՝ ՀՀ Սյունիքի մարզային ենթակայության <<Կապանի մշակույթի կենտրոն>> պետական ոչ առևտրային կազմակերպությունը, մարզի քաղաքային համայնքների մասնակցությանբ:

Միջոցառման մասնակիցները

<<Երազ իմ երկիր>> խորագրով մարզամշակութային միջոցառումներին մասնակցում են մարզի համայնքներից շնորհալի և ստեղծագործ երեխաներ, անհատ կատարողներ, երիտասարդներ ու պատանիներ, մարզի տարածաշրջաններից հրավիրված համույթներ, ժողովրդական և ժամանակակից պարի խմբեր, դերասաններ:

Միջոցառման ժամկետը և վայրը

Միջոցառումները անց են կացվելու ս/թ ապրիլ-մայիս ամսում՝ մարզի քաղաքային և գյուղական համայնքներում, Կապանի <<Արծվաբույն>> տարեցների կենտրոն:

Միջոցառման ընթացքը և ծախսերը

<<Երազ իմ երկիր>> խորագրով մարզամշակութային միջոցառումները կազմակերպվում են ըստ ծրագրի,որը հաստատված է ՀՀ Սյունիքի մարզպետի կողմից, որտեղ արտացոլված են ծրագրի ժամանակացույցը, միջոցառումների անցկացման վայրը և ժամանակը: Միջոցառման ընթացքում տեղի ունեցող փոփոխությունները համաձայնեցվում են կազմկոմիտեի հետ: Միջոցառումների անցկացման հետ կապված բոլոր ծախսերը հոգում է պատվիրատուի կողմից կատարող կազմակերպությունը:

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավար Ի.Սարգսյան

Հավելված 4
ՀՀ Սյունիքի մարզպետի
2017թ. ապրիլի 18-ի
N 47-Ա որոշման

ՆԱԽԱՀԱՇԻՎ

<< Երազ իմ երկիր >> մարզամշակութային միջոցառման

h/h	Ծախսերի անվանումը	Հոդված	Գումարը /հազ.դրամ/
1	Տրանսպորտային միջոցների վարձակալում	4216.21	95.0
2	Սարքեր և սարքավորումների վարձակալում	4216.22	35.0
3	Հանրային սննդի ծառայության ծախսեր	4236.21	65.0
4	Նվերներ	4237.12	205.0
5	Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	4239.11	107.0
6	Մասնագիտական ծառայությունների ձեռք բերման ծախսեր	4241.00	248.0
7	Գրասենյակային ապրանքներ և նյութեր	4261.11	20.0
8	Այլ ծախսեր	4861.00	25.0
	Ընդամենը		800.0

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավար՝ Ռ.Սարգսյան

Հավելված 5
ՀՀ Սյունիքի մարզպետի
2017թ ապրիլի 18 -ի
N 47 - Ա որոշման

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

<<Երազ իմ երկիր >> խորագրով մարզամշակութային միջոցառման

Հ/հ	Միջոցառման անվանումը	Ժամկետը	Վայրը
1	Ցուցահանդես «Աշխարհն առանց պատերազմի» պատանի նկարիչների աչքերով	Ապրիլ-մայիս 2017թ.	Մարզի համայնքներ
2	Համերգ մարզում տեղակայված N զորամասերում	Ապրիլ-մայիս 2017թ.	ՀՀ Սյունիքի մարզում տեղակայված N զորամաս
3	Մայիսյան հաղթանակներին նվիրված տոնական համերգ	Մայիս 2017թ.	Մարզի համայնքներ
4	ՀՀ Սյունիքի մարզպետի և համայնքի ղեկավարների հանդիպում Հայկական բանակում ծառայող և Արցախյան ազատամարտի մասնակից վետերանների հետ:	Մայիս 2017թ.	Մարզի համայնքներ
5	Այցելություններ և շնորհավորանքներ Հայրենական Մեծ պատերազմի վետերաններին	Մայիս 2017թ.	Մարզի համայնքներ
6	<<Մեկ օր տարեցների հետ>> խորագրով՝ այցելություն Կապանի <<Արծվաբույն>> տարեցների կենտրոն,կանաչապատում, ծառատունկ, տարածքի մաքրում:	Ապրիլ -մայիս 2017թ.	ք. Կապան
7	Հանդիպում երկրապահ կամավորական միության մարտիկների և զոհված ազատամարտիկների ընտանիքների հետ:	Ապրիլ-մայիս 2017թ.	ք. Կապան
8	Պսակադրություն Արցախյան ազատամարտում զոհվածների շիրիմներին և անհայտ կորածների հուշարձանին	Ապրիլ-մայիս 2017թ.	Մարզի քաղաքային համայնքներ
9	Համերգային ելույթներ նվիրված աշխատանքի և աշխատավորների միջազգային օրվան:	Մայիս 2017թ	Մարզի համայնքներ
10	Մարզի երաժշտական և արվեստի դպրոցների երգչախմբերի մարզային փառատոնի կազմակերպում	Ապրիլ-մայիս 2017թ	Ք.Կապան
11	Ուխտագնացություն Վահանավանք, Հալիձոր պատմամշակութային վայրեր և համալիրի տարածքի մաքրում	Ապրիլ-մայիս 2017թ.	Ք.Կապան
12	Հյուրասիրություն ավանդական ուտեստներով	Ապրիլ-մայիս 2017թ..	ք. Կապան

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավար՝ Ռ.Սարգսյան

Հանձնարարության պայմանագիր

ք. Կապան 19 ապրիլի 2017թ.

ՀՀ Սյունիքի մարզպետարանը՝ ի դեմս Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Ռ.Սարգսյանի (այսուհետ պատվիրատու), մի կողմից, և մյուս կողմից Սյունիքի մարզային ենթակայության <<Կապանի մշակույթի կենտրոն>> ՊՈԱԿ-ի տնօրեն՝ ի դեմս Վ. Արզումանյանի (այսուհետ կատարող), առաջնորդվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 40-րդ գլխի դրույթներով, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրի առարկան է հանդիսանում կատարողի կողմից պատվիրատուի անունից և նրա հաշվին կազմակերպել և իրականացնել <<Երազ իմ երկիր>> մարզամշակութային միջոցառումը (այսուհետ՝ **Ծրագիրը**):

1.2. Ծրագրի կազմակերպման նախապատրաստական աշխատանքները, բովանդակությունը և ժամկետները ամրագրված են միջոցառման ծրագրում:

1.3. Պատվիրատուն ծրագրի իրականացման համար կատարողին փոխանցման կարգով տրամադրում է 800.0 հազ. (ութ հարյուր հազար) դրամ, համաձայն ծախսերի նախահաշվի:

1.4. Ծրագրի իրականացումից հետո երկու ամսվա ընթացքում, կատարողի կողմից պատվիրատուին է ներկայացվում ամփոփ հաշվետվություն (պատվիրատուի սահմանած ձևերով), Ծրագրի իրականացման հետ կապված ծախսումների վերաբերյալ:

1.5. Պատվիրատուի կողմից հաշվետվությունը քննարկվում է ներկայացումից մեկ ամսվա ընթացքում: Նշված ժամկետում առարկություններ չլինելու դեպքում հաշվետվությունը համարվելու է ընդունված և կատարողի պարտավորությունները կատարված:

2. Կողմերի իրավունքներն ու պարտականությունները

2.1. Սույն պայմանագիրը ստորագրելով, պատվիրատուն կատարողին տալիս է անհրաժեշտ և բավարար բոլոր լիազորությունները Հայաստանի Հանրապետությունում (կապված սույն պայմանագրի առարկայի իրականացման հետ), կնքելու համապատասխան պայմանագրեր, որոնք ուղղակի կամ անուղղակի կարգով կարող են կապվել սույն պայմանագրի իրականացման հետ:

2.2. Սույն պայմանագիրը ստորագրելով պատվիրատուն կատարողին տալիս է անհրաժեշտ և բավարար բոլոր լիազորությունները ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 323 հոդվածում նախատեսված դեպքերում և պայմաններով, հանձնարարության կատարումը հանձնարարել այլ անձի:

2.3. Սույն պայմանագրի իրականացման հետ կապված բոլոր դրամական ծախսերը իրականացվում են կատարողի կողմից: Այս դեպքում գործում է սույն պայմանագրի 1.5 կետի պահանջները և կատարողի կատարած ու ծրագրի հետ կապված ծախսերը չեն համարվում կատարողի իրացման շրջանառություն:

2.4. Պատվիրատուն իրավունք ունի

ա/ իրականացնել Ծրագրի կազմակերպման որակի հսկողություն

բ/ վերահսկել ներկայացվող հաշվետվությունների հավաստիությունն ու ճշտությունը

2.5. Կատարողն իրավունք ունի

ա/ պատվիրատուից պահանջել վերացնել բոլոր այն թերություններն ու բացթողումները, որոնք խոչընդոտում են կատարողին լիարժեք իրականացնել իր գործունեությունը:

2.6. Պատվիրատուն պարտավորվում է

ա/ կատարողին ցուցաբերել Ծրագրի իրականացմանն ուղղված անհրաժեշտ օժանդակություն

բ/ ժամանակին կատարել վճարումները

2.7. Կատարողը պարտավոր է

ա/ ապահովել միջոցառման Ծրագրի պահանջներին և հաստատված չափանիշներին համապատասխան իրականացումը

բ/ Ծրագրի իրականացմանը մասնակից դարձնել համայնքներին և Ծրագրին առնչվող կազմակերպություններին:

3. Այլ պայմաններ

3.1. Հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 786-րդ հոդվածի 1-ին կետի պահանջները, սույն պայմանագիրը վավերացնելով, պատվիրատուն լիազորում է կատարողին իրականացնելու սույն պայմանագրի առարկան հանդիսացող Ծրագրի իրականացման հետ կապված բոլոր անհրաժեշտ գործառույթները:

3.2. Հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 782-րդ հոդվածը, սույն պայմանագրի շրջանակներում պատվիրատուի լիազորությամբ կատարողի կողմից կնքվող պայմանագրերի բոլոր իրավունքներն ու պարտականությունները ձեռք է բերում ու կրում անմիջականորեն պատվիրատուն:

3.3. Սույն պայմանագրի իրականացման ընթացքում հնարավոր տարաձայնությունները լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում կողմերը կարող են հարցը լուծել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

3.4. Սույն պայմանագիրը ուժի մեջ է վավերացման պահից և գործում է մինչև պարտավորությունների պատշաճ կատարումը: Այն կարող է փոփոխվել միայն երկու կողմերի գրավոր համաձայնությամբ:

3.5. Սույն պայմանագիրը կնքված է հայերեն, երկու օրինակից, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ:

4. Կողմերի իրավաբանական հասցեները

Պատվիրատու	**Կատարող**
ՀՀ Սյունիքի մարզպետարան Ք. Կապան Գ.Նժդեհի 1 Կենտրոնական գանձապետարան h/h 900311145032	<<Կապանի մշակույթի կենտրոն>> ՊՈԱԿ Ք. Կապան Գ.Նժդեհի 16 <<Յունի>> բանկ Կապանի մ/ճ h/h 24107011206500

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
Աշխատակազմի ղեկավար՝ Ռ.Սարգսյան

Տնօրեն՝ Վ.Արզումանյան